

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ. Լ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

Շաղկապը, որպես ուսումնասիրության առանձին առարկա, հայ քերականության պատմության մեջ հատուկ քննության ու ուսումնասիրության չի ենթարկվել։ Սույն հոդվածով մենք կաշխատենք խմբավորել արդի հայերենի համադասական շաղկապները ըստ նրանց արտահայտած հիմնական նշանակությունների՝ միաժամանակ ներկայացնելով այդ խմբերի մեջ մտնող շաղկապների ամենատարածված և ամենահիմնական իմաստային կիրառությունները միայն։ Տեղի սղության պատճառով մենք խուսափել ենք նաև ոճական և կիրառական բնույթի մի շարք կարևոր դիտողություններ ու օրինակներ բերելուց։

Արդի հայերենի համադասական շաղկապները, հանդես դալով նախադասության համադոր անդամների, համադաս նախադասությունների, ինչպես նաև խոսքի տարբեր հատվածների շաղկապման դերով և նշելով նրանց միջև եղած տարբեր բնույթի իմաստային հարաբերություններն ու երանգները, հիմնականում բաժանվում են հետևյալ տեսակների՝

Ա) Միավորիչ հարաբերություններ արտահայտող շաղկապներ

Բ) Հակադրական հարաբերություններ արտահայտող շաղկապներ

Գ) Բաժանական կամ տրոհական հարաբերություններ արտահայտող շաղկապներ։

Համադասական և ստորադասական շաղկապների միջև հատուկ դիրք են զբաղում մեկնական շաղկապները, որոնք այստեղ քննության չեն առնվի։

Համադասական շաղկապների դերակշռող մասը, ինչպես նաև իրենց գործածությունների հաճախականությամբ ամենատարածվածները կազմվածամբ սլարդ են։

Ա) ՄԻԱՎՈՐԻՉ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Համադասական շաղկապներից ամենատարածվածները, շարահյուսական նշանակություններով ամենածանրաբեռնվածները միավորիչ շաղկապներն են (դերադանցապես և, ու)։ Սրանք նշում են առարկաների և երևույթների այնպիսի կապ, որի ժամանակ այդ առարկաներն ու երևույթները, դիտվելով որպես հավասար արժեք ներկայացնող իրողություններ ու փաստեր, այդ ասույթի

կազմում ներկայանում են քվարկման, տարբեր իրողությունների փաստական միավորման ու շարադրման հարաբերությամբ¹:

Հասկանալի է, որ նախադասության համազոր անդամներից առաջ նրանց դերը սահմանափակվում է լոկ թվարկման հարաբերությամբ: Այդպես չէ սակայն համադաս նախադասությունների կապակցման դեպքում: Նախ, քանի որ մեկը մյուսից անկախ և բառիս լայն իմաստով հավասարազոր համադաս նախադասություններ, ինչպես նախադասության համազոր անդամներն են, այնքան էլ հաճախակի չեն հանդիպում, մանավանդ գիտական բնույթի գործերում, ուր սովորաբար լրացակայում են զանազան պատկերների, բնության տեսարանների և այլնի նկարագրությունները, որտեղ փաստերը տրվում են հաճախ սոսկական ձևով, և երկրորդ, որովհետև նախադասությունները, իմաստային լայն բովանդակություն ունենալով (քան նախադասության անդամներն են), որոշակի իմաստային հարաբերության մեջ են մտնում միմյանց հետ, որի պատճառով այդ հարաբերությունների զրոհորման համար գործածվող և կամ ու շաղկապներն էլ բնականաբար հարստանում են իմաստային ու ոճական նորանոր կիրառություններով՝ ձեռք բերելով շարահյուսական բազմիմաստություն:

Միավորիչ մյուս շաղկապները, պահպանելով այդ շաղկապների վերոհիշյալ հիմնական նշանակությունը, զերծ են նախորդ երկու շաղկապների շարահյուսական բազմիմաստությունից և արտահայտում են մեծ մասամբ իմաստային մեկ հարաբերություն:

Ստորև տալիս ենք միավորիչ շաղկապների իմաստային բաժանումները ամենաընդհանուր գծերով:

ա) Թվարկման հարաբերությունն ընդ շաղկապներ. Թվարկման հարաբերությունը, ինչպես նշեցինք, հատուկ է միավորիչ բոլոր շաղկապներին. հաջորդաբար մեջ են բերվում, թվարկվում են առարկաներ ու երևույթներ, որոնք իմաստային ինչպիսի փոխհարաբերությունների մեջ էլ գտնվեն իրար նկատմամբ, դարձյալ ներկայացվում են, շնորհիվ իրենց շարահյուսական հատուկ կառուցվածքի, որպես իրողությունների սոսկական հաղորդում: Այս հարաբերությունը հատուկ կերպով շեշտվում է հատկապես այն դեպքերում, երբ նախադասության համազոր անդամներ են կապակցվում (նախադասության ինչ անդամի պաշտոն էլ որ կատարելիս լինեն նրանք): Օրինակներ.

Թվարկման, տարբեր իրողությունների միավորման ու շարադրման այս հարաբերությունը բնականաբար ենթադրում է նաև զրանց զուգակցումը. հավելումը մեկը մյուսի վրա: Այս հատկանիշն է նկատի ունեցել բազմամաստակ հայագետ Մ. Արեղյանը, երբ նման կապակցությունները (այսինքն միավորիչ շաղկապներով եղած կապակցությունները) անվանել է հավելական (տե՛ս նրա «Աշխարհարարի շարահյուսություն», Վաղարշապատ, 1912, էջ 327), ղեկավարելով բաղնիսական կապակցության բաժնում, որի մեջ մտնում են նաև մասնական, մեկնական, ժամանակի, բաղդատության, մակաբերական կապակցություն ստեղծող շաղկապներն ու շաղկապական բառերը՝ իրեն համադասական հարաբերություններ արտահայտող: Այդ բաղնիսական կապակցության բաժնից միայն հավելական է, որ նույնանում է մեր կողմից նշված միավորիչ շաղկապներին, մինչդեռ մյուսները շաղկապական բառեր են՝ համադասական կամ ստորադասական հարաբերություններ արտահայտող, բացառությամբ մեկնական շաղկապների, որոնք միավորիչ շաղկապների հետ բնորոշվում են ոչ ինչ չունեն և համադասական ու ստորադասական շաղկապների կազմում հատուկ դիրք են զբաղում:

Սուրիկը, Աշոտը և Մարտիրոսը լավ ընկերներ են:

Նրանք ամբողջ օրը երգեցին, պարեցին և ուրախացան:

Սա մի նրբակազմ, բարձրահասակ և զեղեցիկ երիտասարդ էր... (Մուր., 172):

Կանայք և աղջկունք, ծեր և տղա, տանիքներից ու լուսամուտներից ողջունում էին իրար (Րաֆ., 343):

Հանդիպում են նաև տարբեր կառուցվածք ունեցող, բայց նախադասութ-
յան նույն պաշտոնով հանդես եկող բառերի և բառակապակցությունների
շաղկապման օրինակներ, ինչպես՝

Նա ազնիվ և ֆո երջանկության համար անշափ մտահոգվող ընկեր է:

Նույնիսկ նախադասության նույն պաշտոնով հանդես չեկող բառերն էլ են
կապակցվում, իհարկե, ոճական հատուկ երանգով: Նման դեպքերում «էլ»
եղանակավորող բառի փմաստն էլ է կարծես զրսևորվում և-ով. օրինակ՝

...Երբեք և ոչ մի պատերազմում իմ ձին կորցրած չեմ, բայց այդ կղզում
կորցրի ձիս (Րաֆ., 560):

Բարդ նախադասության մասերի միջև օգտագործվելիս այս շաղկապները
հիմնականում պահպանում են բվարկման, միավորման վերոհիշյալ հարաբե-
րությունը (թեպետ ոչ այն որոշակիությամբ, ինչպիսին նախադասության ան-
դամների դեպքում է), հատկապես այն պարագաներում, երբ համադաս նա-
խադասությունների միջև այլ իմաստային փոխհարաբերություններ (հետևան-
քի, հակադրության և այլն) չկան: Օրինակ՝

Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց վրույցները, և քո համբերանքի շիրուխի
խաղաղ ծուխը աչքիս առջև է դեռ, և քո հանդիստ հնամենի ձայնը ականջումս
է տակավին... (ԱԻ, 270):

Թվարկման հարաբերությունը ցայտուն կերպով է զրսևորվում հատկապես
այն ժամանակ, երբ օգտագործվում են կրկնադիր միավորիչ շաղկապներ:
Այս դեպքում շաղկապվող մասերը ընդգրկվում են լեզվական մի կուռ ամ-
բողջության մեջ, և թվարկվող մասերի բովանդակությունները հավասար արժեք
են ձեռք բերում: Բնական է, որ նման կիրառությունների ժամանակ շաղկապ-
վող մասերը հատուկ ուժով, սաստկական երանգով են մեջ բերվում, որի պատ-
ճառով այդ կրկնադիր շաղկապները ձեռք են բերում նաև սաստկական-էմո-
ցիոնալ երանգ: Այս դեպքում ևս թվարկման իմաստային հարաբերությունը
սաստկական-էմոցիոնալ երանգը ավելի ցայտուն կերպով են զրսևորվում հատ-
կապես նախադասության համադր անդամների կապակցման ժամանակ:
Ահա այդ կրկնադիր շաղկապները՝ և...և, քե... քե, էլ...էլ, ոչ...ոչ, համ...համ
(ժող. բնույթի): Օրինակներ.

Այդ դիտակցությունն էր ահա մեր ղորավիզը, մեզ ոգևորող, առաջ մղող
խթանը, մեզ արհամարհել տվողը և քաղց, և զրկանք, և վտանգ, և մահ:

Եվ յոթն անգամ յոթն ցերեկ շարեցին,

Եվ յոթն անգամ յոթն երեկո նա փլվեց,

Եվ մշակները տխրությամբ դնացին

Եվ Հովհաննիս անհուսություն պաշարեց (ԳՍԲ, 365):

Կապակցվող մասերը շեշտելու, հատուկ կերպով նշելու մոմենտը ավելի է
ուժեղանում քե կրկնադիր շաղկապի կիրառության ժամանակ, որո հիմնակա-

նում օգտագործվում է նախադասության անդամների կապակցման ժամանակ, ինչպես՝

Մենք աստիճանաբար կհասնենք այն բանին, որ քաղաքը լրիվ ապահովված կլինի րև խմելու, րև ոռոգման և րև տեխնիկական ջրով (Եր. 1957, նոյ. 21, 2)։

Այդ ավելի լավ րև ձեզ և րև ինձ համար... (Ն.-Դ., 15)։

Կրկնադիր ևլ շաղկապը ունի շարադասական այն առանձնահատկությունը, որ մյուս շաղկապների նման կապակցվող մասից առաջ չի դրվում, այլ պահպանում է միայնակ գործածությամբ ունեցած իր ևտադաս դիրքը։ Համադաս նախադասությունների շաղկապման դերով շատ քիչ է հանդիպում. օրինակ՝

էլ ի նշ Երկարացնեմ, գեղերս վրա են տալի. իրեն ևլ են ուտում, ձիուն ևլ (ՀԹ, 402)։

Ձափազանց հեռաքրքրական է ևլ կրկնադիր շաղկապի կիրառությունը նախադաս ձևով, որը հատուկ է մասնավորապես ժողովրդական խոսակցական լեզվին, ինչպես՝

Գնացի շուկա. ևլ բարեկամ, ևլ ծանոթ, բոլորը այնտեղ էին։

Կրկնադիր այս շաղկապը, ունենալով ոճական չորահատուկ արժեք, պարզ ժողովրդական խոսակցական լեզվի կոլորիտ ստեղծելու արժեք, գերազանցապես սարածված լ գեղարվեստական գրականության մեջ։ Քաղաքական և մասավանդ գիտական բնույթի գործերում հազվադեպ է գործածվում։

Թվարկման, շեշտման նշանակությամբ է գործածվում նաև ոչ...ոչ կրկնադիր շաղկապը. սակայն արդեն ժխտական իմաստով, ինչպես՝

Ենեւ ձանապարհ, խնդուն հեռանալ,

Ձվարթ և թեթե թափառել ազատ,

Եւ ոչ հայրենիք, ոչ տուն ունենալ,

ոչ անուն, ոչ գենք, ոչ փառք, ոչ արծաթ... (ՎՏ, 197)։

Երբ ոչ...ոչ կրկնադիր շաղկապով կապակցվող նախադասության անդամները տվյալ նախադասության ստորոգյալից անմիջապես նախադաս կամ ևտադաս են, ապա այդ ստորոգյալը անպայման ժխտական ձևով է գործածվում, օրինակ՝

Ո՛չ Սուրիկը, ո՛չ Տիգրանը, ո՛չ էլ Արամը չկարողացան խնդիրը վճել, Կամ՝

Չկարողացան խնդիրը վճել ո՛չ Սուրիկը, ո՛չ Տիգրանը, ո՛չ էլ Արամը։ Իսկ երբ ժխտվող կապակցությունների նկատմամբ ստորոգյալը միջադաս դիրք է զբաղում, այդ դեպքում այն արդեն ժխտական ձևով չէ, ինչպես՝

Ո՛չ Սուրիկը կարողացավ խնդիրը վճել, ո՛չ Տիգրանը, ո՛չ էլ Արամը։

Թվարկման նշանակությամբ գործածվող կրկնադիր շաղկապների այս բաժինը ավարտելու համար հարկ ենք համարում նշել հետևյալը։

Կրկնադիր շաղկապները հիմնականում հանդես են գալիս նախադասություն համադրող անդամների շաղկապման դերով։ Նրանց շեշտադրությունը կանոնավորված չէ։ Այդ շաղկապներին հանդիպում ենք հավասարապես թե շեշտով և թե առանց շեշտի։ Բոլորովին պարզ է շեշտի գործածությունից ևլ... ևլ շաղկապը։ Չնայած հիշյալ շաղկապները հիմնականում նույն իմաստ ունեն հարաբերությունն են արտահայտում (բացի կրկնադիր ոչ...ոչ շաղկապից,

որը ժխտական նշանակությամբ է թվարկում ու շեշտում), սակայն երբեք չեն կարող դիտվել որպես հավասարաթեք հոմանիշներ: Այդ շաղկապները միայն ընդհանուր գծերով են հոմանիշ՝ թվարկման, շեշտման իմաստային հարաբերությամբ կապակցվող մասերը մեկ սերտ ամբողջության մեջ միավորելու հատկանիշով:

բ) Հավելական հարաբերություններ նշող շաղկապներ. *ինչպես արդեն ասացինք, միավորիչ շաղկապների հիմնական իմաստային հատկանիշներից մեկն այն է, որ նրանք, ծառայելով տարբեր, բայց ոչ հակադիր կամ մեկը մյուսին բացառող իրողություններ ու փաստեր կապակցելուն, հաջորդաբար մեջ են բերում, շարադրում են այդ փաստերն ու իրողությունները, որի պատճառով ինքնըստինքյան ձեռք են բերում թվարկման նշանակություն: Տեսանք նաև, որ այդ հարաբերությունը ավելի խիստ կերպով դրսևորվում է կրկնագիր շաղկապների կիրառության ժամանակ: Քանի որ թվարկման հիշյալ հարաբերությունը անպայման ենթադրում է նաև այդ փաստերի ու իրողությունների ավելացումը, գումարումը մեկը մյուսի վրա, ապա պատահական չէ, որ միավորիչ շաղկապները ունեն նաև հավելական նշանակություն: Այս դեպքում ևս այդ նշանակությունը հավասարապես նույն աստիճանով հանդես չի գալիս: Կան միավորիչ շաղկապներ, որոնք առանձնացվել են լեզվում այդ հարաբերությունը ավելի որոշակիորեն նշելու համար: Այսպիսով, իմաստային այս հատկանիշը հատուկ լինելով ընդհանրապես միավորիչ բոլոր շաղկապներին, ավելի ընդգծված կերպով երևան է դալիս նրանցից մի քանիսի մոտ: Հիշյալ շաղկապները իրենց այդ նշանակության հետ մեկտեղ ունեն նաև այս կամ այն աստիճանի սաստկական երանդ: Ահա այդ շաղկապները՝ նաև¹, ինչպես նաև, ինչպես և, նույնպես¹, նույնպես և. ինչպես... այնպես և, ինչպես... այնպես էլ, ինչպես... նույնպես և, ինչպես... նույնպես էլ, ոչ միայն... այլև: Օրինակներ.*

Դյուցազնական-նահապետական Լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով ու սովորություններով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով ազատության ու երջանկության համար եղան Օհանեսի ներշնչարանը (ԱԻ, 439):

Ուրալի, Սիբիրի ու Ղազախստանի, ինչպես նաև երկրի մյուս շրաններում, վիթխարի հնարավորություններ կան անասնաբուծության զարգացման համար (ՍՀ, 1956, օգ. 1, 1):

Փիղը ուրիշ կտրիչներ, ինչպես և ժանիքներ չունի (Կենդանաբ. նրև., 1951, 368):

Ներկա ժամանակի եղակի թվի առաջին, երկրորդ և երրորդ, նույնպես և հոգնակի թվի երրորդ դեմքում «Ե» վերջավորություն ունեցող բայերը կարգացվում են միատեսակ, թեև տարբեր են գրվում (Ֆրանսերեն լեզվի դասագիրք, Երև., 1954, 63):

Ծանր կերպով հարկվեցին բոլոր դասակարգերի և բոլոր զբաղմունքների մարդիկ՝ բոլորը պետք է հայթայթեին հանդերձանք, զենք, նույնպես ոսկի ու արծաթ և, բացի դրանից, զանազան պարենեղենի պաշարներ ու ամեն տեսակ փոխադրական միջոցներ (ՀՄՔՏ, 173):

¹ Ավելի տարածված է ներառական հարաբերություններ նշող կիրառություններով:

Նաև շաղկապը հավելական նշանակությամբ ավելի շատ դործածվում է գեղարվեստական գրականության մեջ: Հիմնականում գիտական, քաղաքական բնույթի դործերում են հանդիպում ինչպես նաև, ինչպես և ու ոչ այնքան տարածված նույնպես, նույնպես և շաղկապները:

Հավելական նշանակությամբ նախադասության նախորդ համադոր անդամի հետ կապակցությունն ստեղծող այս շաղկապները միաժամանակ ունեն շաղկապվող կապակցությունը յուրահատուկ կերպով ընդգծելու, շեշտելու հատկանիշ: Կարծես հեղինակը քիչ ուշացած մեջ է բերում ըստ էության հավասար արժեք ունեցող այդ երկրորդ կապակցությունը, որի պատճառով առանձնացվում է և հատուկ կերպով նշվում:

Զուգահիշ գործածությունն ունեցող շաղկապներից հավելական հարաբերություններ են նշում ինչպես... այնպես և, ինչպես... այնպես էլ, ինչպես... նույնպես և շաղկապները, որոնք ծառայում են միմիայն նախադասության համադոր անդամների կապակցմանը: Սրանք կրկնադիր միավորիչ շաղկապների նման շեշտում են իրենցով սկսվող մասերը՝ հավասար արժեք տալով նրանց: Այսպիսով այս շաղկապները ունեն նաև հավելական նշանակություն՝ ռաստկական երանգով: Կապակցվող մասերը ավելի խիստ կերպով են շեշտվում ոչ միայն... այլև շաղկապի կիրառության ժամանակ: Օրինակներ.

Գործողության կատարման ինչպես տեղը, այնպես և ժամանակը սերտորեն կապված են միմյանց հետ:

Դա լեզվական մի շարք կարևոր իրողությունների և գլխավորապես գոյականի ու դրա քերականական կատեգորիաների լավագույն վերլուծությունն է և, իրեն այդպիսին, մեծարժեք ներդրում ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային լեզվաբանական մտքի պատմության մեջ (ՄՀ, 1957, նոյ. 16, 3):

Ինչպես ամեն բարդություն, նույնպես և խսկական բարդությունը ծագում է շարահյուսական կապակցությունից (Մ. Արեղյան, Հայ. լեզ. տես., Երև., 1931, 192):

Հայերը լեզունրից կովում էին մեզ հետ ոչ միայն զենքերով, այլև քարերով ու փայտերով: Եվ կովում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայքը (Րաֆ, 518):

Յուրահատուկ է ոչ միայն Մահարու հումորը, այլ նաև՝ մանկության և պատանեկության թեմայի բացահայտման նրա սկզբունքը (ԳԹ, 1957, հուն. 6, 3):

Կիրառական նշանակությամբ զուգահիշ հավելական շաղկապներին բավական մոտ է ոչ այնքան... որևէ շաղկապական կապակցությունը: Սակայն եթե նախորդ շաղկապներով կապակցվող լեզվական միավորները հավասար արժեք էին ձեռք բերում, ապա այս շաղկապի գործածության ժամանակ կապակցվող երկրորդ մասը ավելի մեծ կարևորություն ու արժեք է ստանում. համեմատիր, օրինակ, հետևյալ նախադասությունները.

Մացակ Ավագյանի տունը նշանավոր է գյուղում ոչ այնքան իր երկու հարկերով ու կղմինդրե տանիքով, որքան այդ տանիքին բույն դրած աղավինների անհամար բազմությամբ (ՆՀՀ, 20):

¹ Սվ. ի փոխարեն նաև-ի կիրառությունը կարծես ավելի է բնութագրում այդ զուգահիշ շաղկապի սաստկական երանգը:

դ) ներառական հարաբերություններ նշող շաղկապներ. Ի տարբերություն մյուս համադասական շաղկապների, ներառականները ոչ նախադասության համադոր անդամներ են կապակցում, ոչ էլ համադաս նախադասություններ: Նրանք սոսկ տրամաբանական կապ են ստեղծում նախորդ նախադասությունների, պարբերությունների կամ խոսքի հատվածների մեջ արդեն իսկ նշված (գուցե և բոլորովին չնշված) իրողությունների, փաստերի, առարկաների հետ, ակնարկելով, որ իրենցով կապակցվող լեզվական միավորները նախադասության բովանդակության որևէ կողմով համաձայն են, նման են կամ նույնպիսի վիճակի մեջ են, ինչ որ նախորդները: Նման կապի մեջ կարող են գտնվել ինչպես նախադասության առանձին անդամներ, այնպես էլ ամբողջ նախադասություններ կամ պարբերություններ: Այժմ բերենք այդ շաղկապների ամենատարածված կիրառություններից մի քանի օրինակներ.

Գեորգին ուժեղ ապրումներից հետո հրապարակորեն խոստովանում է իր մեղքը: Արմենը վեհանձնորեն ներում է ընկերոջը: Գեորգին հեռանում է լեռները, նրա հետ գնում է նաև Գայանեն, որպեսզի միասին սկսեն նոր կյանք (ՍՀ, 1957, նոյ. 7, 4):

Մի շարաթ առաջ ես հիվանդ էի. այսօր էլ ինձ լավ չեմ գտում:

Այս շաղկապի նշանակությունը քիչ փոխված է հետևյալ օրինակում՝

Նա գործարանում աշխատում է որպես փականագործ, սովորում էլ է:

Այս նախադասության մեջ էլ-ը նշանակությամբ մոտենում է նաև շաղկապին:

Երբ կապակցվող մասերի բովանդակությունները սոսկ շաղկապվում են, և երբ նրանց միջև իմաստային որևէ ընդհանուր կողմ չկա, այդ էլ շաղկապը ձևով է բերում «իսկ» նշանակությունը, ինչպես՝

Նա ցանկանում էր մեզ համոզել, մենք էլ (=իսկ մենք) ամեն կերպ աշխատում էինք շենթարկվել նրան:

Գնաց, էլ (=իսկ) թե ինչ եղավ, տեղեկություն չկա (ԱԲԵ, 81):

Ուշադրության արժանի են նաև այս շաղկապի կիրառությունները «եթե, էթե նույնիսկ» նշանակությամբ, ինչպես՝

Հոգնած էլ լինեմ, կաշխատեմ զալ:

Իմաստի և կիրառության տեսակետից էլ շաղկապին բավական մոտ է ևս շաղկապը, որը սակայն գերազանցապես օգտագործվում է գրավոր լեզվում: Ներառական հարաբերություններ նշելիս այդ շաղկապը ետադաս դիրք ունի և կարող է վերաբերել նախադասության ամենատարբեր անդամների, ակնարկելով նախորդ նախադասություններում նշված համանման դեպքեր, երբևիցեներ ու յառարկաներ, ինչպես՝

Հայաստանի կուլտուրական զարգացումը ևս, ինչպես հայտնի է, առավել բարձր աստիճանի վրա էր գտնվում ոչ թե Արշակունի հայ թագավորների ժամանակ, այլ գրեթե գյուտից հետո՝ մարզպանական և հետագա շրջաններում (ՀՄՔՏ, 5):

Ներառական հարաբերություններ է նշում նաև Նույնպես շաղկապը, որը մեծ մասամբ ետադաս դիրք ունի կապակցվող բառի նկատմամբ, ինչպես՝

Խնդրում եմ հավատար, որ եթե նամակում հանդիպեք անգամ «չար» տղերի, բարի է նրանց նկրտումն ու նպատակը: Ավելորդ եմ համարում Նույնպես գովասանքի խոսքեր ասել Ձեր մասին... (ԳԹ, 1957, նոյ. 21, 4):

Բայց շատ անգամ նա այնպիսի դիրք է զբաղում, որի դեպքում վճռական նշանակություն է ստանում տրամաբանական շեշտը, ինչպես՝

Հասարակածային Աֆրիկայի և Մեքսիկայի մի քանի շրջաններում նույնպես գոյություն ունեն սուլոցի լեզուներ. բայց դրանք այնքան ճշգրիտ չեն, ինչպես սիրոն (Եր., 1957, նոյ. 17, 3):

Օրինակներ ներառական և շաղկապից.

Լուծվում տիրեց վրանում: Չէր խոսում և Մարգարետունին. նա էլ խորասուզվել էր մտածմունքի մեջ (Մուր., 171):

Ծառերի հետ փուլ են դալիս և քարերի ահագին բեկորներ (Րաֆ., 18):

ՄԻԱՎՈՐԻՉ ԾԱՂԿԱՊՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԿԱՐԵՎՈՐ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԻՐԱԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՄԱԴԱՆԱԿ ԵՎ ՆԱԽԱԳԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Միավորիչ շաղկապներից երկուսը (և, ու) համադաս նախադասությունների կապակցման ժամանակ իրենց բուն միավորիչ հարարերություններից բացի արտահայտում են այդ կապակցվող մասերի կոնկրետ նյութական բովանդակությունից բխող իմաստային այլ հարարերություններ, որոնք կարող են լինել ժամանակային, պատճառ-հետևանքային, հակադրական և այլն: Այդ հարարերությունները թեև երկրորդական արժեք ունեն և ազդուողում են միավորիչ՝ հավելական, թվարկման և այլ հարաբերությունների ֆոնի մեջ, սակայն գոյություն ունեն, որի պատճառով անհրաժեշտ է առանձին-առանձին կանգ առնել դրանց վրա:

1. Համադաս նախադասությունների ժամանակային փոխհարաբերություններ և, ու շաղկապների կիրառության ժամանակ. Պետք է նկատել, որ այս շաղկապներով կապակցվող համադաս նախադասությունները հնարավոր չէ պատկերացնել առանց դրանց միջև եղած ժամանակային փոխհարաբերությունների, քանի որ հենց նախադասությունը գործողության հետ կապված մի փաստի շարադրում է: Ըստ այսմ համադաս նախադասությունների գործողությունները կարող են կատարվել՝

ա) նույն ժամանակամիջոցում, ինչպես՝

Անդրանիկ Թադևոսյանը քայլում էր մենակ, և հարություն էին առնում նրա հոգում մանկության և պատանեկության բոլոր հուշերը... (ՀՔ, 496):

Միաժամանակության այս հարարերությունը կարող է հանկարծակի և արագ հաջորդող գործողության պատճառով ակնթարթային ժամանակ ընդգրկել, ինչպես՝

Նա երեսը շուռ տվեց, և նրա աչքին ընկավ յուր պապի՝ Վաչեի պատկերը, որ քարշ էր ընկած պատից (Րաֆ., 55):

բ) Շատ ավելի են տարածված գործողությունների հաջորդականություն արտահայտող համադաս նախադասությունների կապակցությունները: Ժամանակային այս հարարերությունը նշելու համար, բացի և, ու շաղկապներից, օգտագործվում են նաև դեռ մակրայական արժեք ունեցող այնուհետև, այսուհետև կապակցական բառերը և ապա րև շաղկապը: Օրինակներ՝

Նրան ուշքի բերեց կայարանում տիրող ժխորը, և նա դանդաղորեն դուրս գնաց (Ն.Դ., 21):

Դուռը բացվեց, ու մենք ամբողջ խմբով ներս մտանք:

Ուստի գնալուց հետո մի կարճատև լուծվում տիրեց, ապա րև խոսեց մի գյուղացի (ՀՔ, 364):

Թշնամին յուր նեղերի տարափով կծածկե քո հարյուր զինվորներին. այնուհետև կզդին կմնա արարացոց կատաղության նշավակ (ՄԳՄ, 325):

Սեղա, իմ դուստրը և քո Սահականույշը միայնակ է. այսուհետև նա ավելի կարոտ է քո խնամքին (ՄԳՄ, 84):

2. Պատճառա-հետևանքային և ստորագասական շաղկապներին հատուկ իմաստային մի բանի այլ հաւաքերությունների դրսևորումը և, ու շաղկապների կիրառության ժամանակ. Կապակցվող մասերի միջև, ի թիվս հավելական և մասամբ նաև թվարկման հարաբերությունների, մասնակի ձևով առկա են նաև պատճառի և դրանցից բխող հետևանքի հարաբերություններ, որոնք, իհարկե, բխում են այդ մասերի բովանդակությունների իմաստային փոխհարաբերություններից: Օրինակներ.

Կայծակը շանթեց մոտակա ծառերի կատարներին, և մերձակայքը լուսավորվեցավ լաց-վարդագույն փայլով (ԲաՖ. 17):

Փողոցում սաստիկ ցեխ էր, և նա հագավ իր կրկնակոշիկները:

Հետևանքի այդ հարաբերությունը շեշտելու ու և շաղկապի լեքսիկական թուլությունը փոխհատուցելու համար երբեմն նրանից հետո զրվում են օժանդակ, լրացուցիչ բառեր, ինչպես՝

Առաքել ամին հաստատ համոզված էր, որ Հասմիկը վերջ ի վերջո կընտրի Վասակին, և դրա համար խորհուրդ չէր տալիս աղջկա երեսովը տալ նրա պատանեկան համակրանքը Հենի հանդեպ... (ՆՁՀ, 397):

Բաղկացուցիչ մասերի բովանդակությունները կարող են նաև այնպիսի հարաբերակցության մեջ դանդել, երբ արտահայտվում են իմաստային այլ հարաբերություններ, ինչպես՝

1) — Կատարի մեր հոր կամքը, և կլինես ինձ հետ հավասար ժառանգ (Շիրվ. 133):

2) ...Ականջ դիր և կլսես, թե ինչ է մտածում սիրտս. նա նախանձում է քեզ (Ն-Դ., 376):

3) — Խի՞ ենք մենք մեղավոր, — խոսակցության մեջ ընկավ Յոթնվիմբրանը: — Թող քյալադյոդություն չանեին, ու մենք էլ մեր անասունը չմորթեինք... (ՆՁՀ, 99):

4) Պիտի դա ու չդալ չի կարող.

Կֆանդվեն անտառները մթին... (ԳՄ, 59):

Այս օրինակներից առաջինում ու երկրորդում ուրվագծվում է պայմանի ու հետևանքի երանդ. երրորդում՝ նպատակի (որպես թե՛ թող քյալադյոդություն չանեին, ու (որպեսզի) մենք էլ մեր անասունը չմորթեինք...), չորրորդում՝ դուցե պատճառի (պիտի դա, ու (որովհետև) չդալ չի կարող): Այս իմաստային երանդները, իհարկե, այս շաղկապներին հատուկ չեն, սակայն, որպես կապակցող բառեր, նրանք ինքնարևարար ծառայում են նման իմաստների պատասխիվ արտահայտմանը:

Միավորիչ և շաղկապը ծառայում է նաև եզրափակող բնույթի նախադասություններ կապակցելուն: Նշվում է մի փաստ, մի իրողություն, որից հետո որե՛կ հետևություն, կամ առանց հետևության եզրափակվում է հաղորդվածը. օրինակ՝

Վարոսյանի առաջարկը ստացավ երկու ձայն, Վասակի առաջարկը՝ մնացած բոլոր ձայները, և այդպիսով պարտությունի նիստը վերջացավ (ՆՁՀ, 172):

Ի վերջո պետք է նշել, որ արդի հայերենի և, ու շաղկապներով կապակցվող բարդ համադասական նախադասությունների ճնշող մեծամասնությունը արտահայտում է պատճառա-հետևանքային և գործողությունների հաջորդականության հարաբերություն թե՛ գեղարվեստական և թե՛ հրապարակախոսական գրականության լեզվում:

3. Հակադրական հարաբերությունների դրսևորումը և, ու շաղկապների կիրառության ժամանակ. Այս շաղկապներով կապվող համադաս նախադասությունների միջև հաճախ առկա է այնպիսի հարաբերություն, երբ առաջին նախադասության բովանդակությունը հակադրվում է երկրորդ համադասի բովանդակությանը: Այդ հակադրությունը երբեմն խիստ է դրսևորվում, երբեմն թույլ: Հաճախ այդ հակադիր ասույթները, կապվելով այդ շաղկապներով, ավելի կտրուկ և կենդանի ձևով են դուրսգրվում: Այդ նկատելի է հատկապես բանավոր խոսքում՝ ինտոնացիայի ձգնույթամբ: Հիշյալ երանգը առաջանում է նրանից, որ հակադրության նշանակություն չունեցող այդ շաղկապները երկու այդպիսի փաստերի միջև անսպասելի, դիպուկ ձևով են նշում այդ հարաբերությունը: Այդ շաղկապները այդ դերում կարող են ունենալ «բայց, սակայն», «այլ», «իսկ» բառերի նշանակությունները: Բերենք համապատասխան օրինակներ.

1) «Բայց, սակայն» շաղկապների նշանակությամբ՝

Ուշինարան աղավնուն դրեց մի նժարում, իսկ մյուս նժարում իր մարմնից մի փերթ. բայց աղավնին դեռ ծանր էր կշռում: Նորից կտրեց մսի մի փերթ, և աղավնին նորից ծանր էր (ԱԻ, 338):

Դուփում են ձիերը, ու լուռ է դաշտը,

Հողը բուրում է արնոտ մի գարուն... (ԳՄ, 292):

Համադաս նախադասությունների միջև «բայց» շաղկապի երանգը դրսևորվում է նաև այն ժամանակ, երբ երկրորդ համադաս նախադասության մեջ ստորոգյալը ժխտական ձևով է. օրինակ՝

Սպասեց և նորից սպասեց, և բացող չեղավ (ԱԻ, 374):

Երբ նախադասություններից առաջինն է ժխտական ձևով, երբեմն, շատ հաղվադեպ, և շաղկապը պահպանում է բայց-ի իմաստը, ինչպես՝

Իսկամ անգամ հիսուն տարեկան և ծեր եմ արդեն (ՀՀՆ, 124):

2) «Այլ» շաղկապի նշանակությամբ՝

Նա հիմար էր, չէր կարդում շատ թերթեր և միայն ստորագրում էր (ԵԻՐՎ, 341):

Ինչպես տեսնում ենք, այս օրինակում, ճիշտ ինչպես ալլ շաղկապի կիրառության ժամանակ, նախորդ նախադասության ստորոգյալը ժխտական ձևով է:

3) «Իսկ» շաղկապի նշանակությամբ՝

Իսկ երբ լսեց, որ Շմավոնին հանում են և նրա փոխարեն իրենց կոլխոզի նախագահ են նշանակում Լևոն Լամբարյանին, գլխին կացնի հարված ստացածի պես նայեց Մաթոս Գրիգորյանին (ՆՁՀ):

Մեր եղներն ու կովերը ճանապարհը դիտեն. գնում են հանգիստ, ու ես նրանց հետևից (ՍԶ, 97):

4. Եվ շաղկապի կիրառությունները հարակցական հարաբերությունների արտահայտման ժամանակ. Հաճախ և շաղկապով միավորվում են այնպիսի նախադասություններ ու բառակապակցություններ, որոնք դուրս են մնում ար-

դեն նկարագրված իմաստային կիրառությունների շրջանակից: Այդ նախադասությունները իրենց ընդհանուր բովանդակությամբ հանդես են գալիս նախորդ համադասը որևէ կողմով լրացնելու, բացահայտելու, նոր փաստեր հաղորդելու կիրառությամբ, որի պատճառով նրանք կարծես նույն համադրությունը շունեն, ինչ որ մենք տեսանք համադասական նախադասությունների տիպիկ կառուցվածքներում: Այս նախադասությունները կարծես պատահական ձևով են կրցվում նախորդ մասին, քանի որ խոսքի ընթացքում հանկարծակի առաջացած որևէ մի լրացուցիչ միտք անպայման հաղորդելու, նշելու, կամ էլ լրացուցիչ մի դիտողություն անելու հետևանք են: Այդ պատճառով հիշյալ նախադասությունները ավելի շատ հանդիպում են բանավոր խոսակցական լեզվում, երբ խոսակիցների մեջ այս կամ այն միտքը առաջանում է հենց խոսքի ընթացքում, որի պատճառով անմիջապես արտահայտվում է, անկախ պատեհ կամ անպատեհ լինելուն:

Պետք է նշել, որ և շաղկապով նախորդ մասին կցված այդ լրացուցիչ հաղորդումը կարող է ոչ մի կապ չունենալ նրա հետ և կարող է, ընդհակառակը, մեկնաբանող բնույթ ունենալ և եզրափակման ձևով մեջ բերվել: Իմաստային այս հարուստ երանգները, ինչպես դիտենք, բխում են կապակցվող մասերի կոնկրետ նյութական բովանդակություններից: Բերենք մի երկու օրինակ.

— Եղբայրներ, — կանչեց նա քրտնակալած, հեղուկ, — գերմանացիները հանձնվում են...

— Ճիշտ ես ասում, Մատվեյիչ, թե փչոց է:

— Երբ եմ սուտ ասել, և կրակն էլ դադարեցրել են, չե՞ք տեսնում, և կարող է պատահել, որ պատերազմն էլ վերջանում է (ՀՔ, 479):

Արդեն բավական թվով հասարակություն էր հավաքված, և դեռ գալիս էին (Ն-Դ., 207):

Պարզ չէ, թե ում են ուղղված այս փքուն խոսքերը, ու շարունակում եմ ճանապարհս (ՀՀԵ, 414):

Ընկերը հաճախ էր նախատում նրան, և իրավունք էլ ուներ:

Սուրիկը նրան մի լավ ծեծեց, և լավ էլ արեց:

Նկատելի է, որ նախադասության հիմնական մասի հետ սերտ առնչություն չունեցող այս հարակցական նախադասությունները կամ բառակապակցությունները անջատվում են հիմնական մասից նաև ինտոնացիոն որոշ դադարով, ձայնի որոշ իջեցմամբ: Այս հանգամանքը ինքնին նշում է նրա զրաված յուրահատուկ գիրքը համադասական կապակցության բաժնում:

Ու շաղկապի հարակցական նշանակությամբ կիրառությունները այնքան տարածված չեն զրավոր խոսքում, մի հանգամանք, որ բացատրվում է ընդհանրապես այդ շաղկապի սահմանափակ գործածությամբ՝ հոմանիշ և-ի համեմատությամբ:

Բ) ՀԱԿԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Այս շաղկապները, ի տարբերություն միավորիչ շաղկապների, խոսքի կապակցվող մասերը ներկայացնում են հակադրական փոխհարաբերությունների մեջ: Որպես կանոն, նախադասության անդամների միջև այդ հարաբերությունը համեմատարար ավելի թույլ է դրսևորվում, քան նախադասությունների միջև: Ավարտված կամ անկախ նախադասությունների, ինչպես նաև խոսքի հատված-

ների միջև ևս հիշյալ հարաբերությունը մեղմ է արտահայտվում, առավելապես ունենալով առարկության, խոսքի նյութը փոխելու, այլ ուղղությամբ առաջ տանելու կամ արտահայտված մտքի ինչ-որ կողմով մասնակի ձևով նախորդ մասին հակադրվելու նշանակություն: Այդ է պատճառը, որ խիստ հակադիր, ժխտող նշանակություն ունեցող այլ շաղկապը երբեք չի կարող այդ դիրքում օգտագործվել:

Ընկ—Այս հակադրական շաղկապով նշվում է համադաս նախադասությունների այնպիսի իմաստային փոխհարաբերություն, երբ կապակցվող նախադասություններից երկրորդը զուգադրվում է առաջինին՝ նրանից տարբեր և նրան հակադրվող նշանակություն ունենալու պատճառով, առանց սակայն ժխտելու կամ սահմանափակելու նրա բովանդակությունը: Հենց այս վերջին հատկանիշն է պատճառը, որ իսկ շաղկապը ընդհանուր առմամբ ավելի մեղմ կերպով արտահայտված և տարբեր բնույթի հակադրություն է նշում, քան բայց, սակայն, այլ շաղկապները:

Երբ այդ իրողություններն ու երևույթները հանդիպադրվում են բարդ նախադասության կազմում, բնականաբար հակադրվում են նաև այդ նախադասությունների զլխավոր անդամները՝ ստորոգյալն ու ենթական: Սակայն պատահում է նաև, որ հակադրման ժամանակ շեշտը դրվում է հատկապես կամ ենթական, կամ խնդրի, կամ էլ պարագայի վրա: Նման դեպքերում հակադրվող այդ անդամն է անմիջապես դրվում նախադասության սկզբում՝ իսկ շաղկապից հետո: Այժմ բերենք համապատասխան օրինակներ.

1) Նախադասությունների հիմնական բովանդակությունների հետ միասին հատկապես շեշտվում է ենթականների հակադրվելը.

...Իմ արևը, Միխայիլ Մարկիչը շատ բախտավոր մարդ է... իսկ ես, խեղճս, երբ մի քանի ուրբի պարտք եմ ունենում, գիշերները քունս չի տանում (Շիրվ., 334):

Երբ հանդիպադրվող նախադասություններում ստորոգյալը նույնն է, ապա այն չի կրկնվում հաջորդ նախադասության մեջ: Նման դեպքերում իսկ շաղկապը ծառայում է կապակցելու այդ զուգադրվող մասերից վերջինը՝ նախորդին: Ակներև է, որ նման համադաս նախադասությունները կորցնում են իրենց սովորական շարահյուսական անկասկածները՝ սերտ կախման մեջ լինելով մեկը մյուսից, ինչպես՝

Վահագնը քաջություն էր պահանջում, Անահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սեր և բանաստեղծություն (Րաֆ., 75):

2) Նախադասությունների հիմնական բովանդակությունների հետ միասին հատկապես շեշտվում է խնդիրների հակադրվելը.

Կանգնել էր նա մի ձեռքով գրկած որդուն մայրաբար,

Իսկ մյուսով յոթնամյա աղջրկա ձեռքը բռնած (ԳՍԲ, 348):

Առաջագեմ աշակերտներին պարզեցրեցին. իսկ ծուլերին՝ նախատեցին: Հետաքրքրական է իսկ շաղկապի փոխարինումը էլ ներառական շաղկապով՝ Առաջագեմ աշակերտներին պարզեցրեցին, ծուլերին էլ նախատեցին:

Այս դեպքը շատ պարզ ցույց է տալիս, որ իսկ-ո անմիջականորեն խնդրի զուգադրմանն է ծառայում (իհարկե, ամբողջ նախադասության բովանդակության հետ կապված), հակառակ դեպքում էլ շաղկապը չէր դրվի անմիջապես այդ անդամից հետո:

3) Պարագաների հակադրման դեպքեր.

նա մոտեցավ, նստեց բազմոցի վրա, իսկ նրա մոտ նստեց և օրիորդը (Բաֆ., 465):

Այդ լեռների արանքներում սևին են տալիս անտառները, իսկ ափին՝ փոքրիկ սավոյական ավաններ... (ԴԴ, 17):

Պատահում է նաև, որ նախադասության գլխավոր անդամները համընկնում են. այդ դեպքում, պարզ է, շեշտվում են նախադասության մյուս անդամները, ինչպես՝

Հանգստյան տանը ցերեկները մենք ծովափին էինք լինում, իսկ երեկոյան՝ կանաչախիտ պուրակներում:

ՄԻՆՉԳԻՆԻ, ԱՅՆԻՆՉ, ՄԻՆՉ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ—Տարբեր փաստերի զուգադրման և հակադրման հարաբերությամբ իսկ շաղկապին համեմատաբար մոտ են հիշյալ շաղկապները, որոնցով սկսվող նախադասությունները ոչ բացառում, ոչ էլ սահմանափակում են նախորդ նախադասության բովանդակությունը, այլ լուր հակադրվում են, տարբեր իրողություններ կապակցելու պատճառով: Այս շաղկապները սերտորեն կապված են ժամանակի գաղափարի հետ (բացի այնինչ շաղկապից, որը արդի հայերենում բոլորովին կորցրել է այդ նշանակությունը): Նրանց շաղկապական կիրառությունները առաջացել են մակրայականներից: Պետք է նկատի ունենալ սակայն, որ հակադրական շաղկապի կիրառություն ունենալու համար նրանցով կապակցվող նախադասությունները պետք է վերջադաս դիրք գրավեն: Օրինակներ՝

Բայց առաջինի բարեկամությունը գոնե վնաս չբերավ մեզ, մինչդեռ երկրորդը ծանր հետևանքներ ունեցավ (Մուր., 60):

Սովորաբար առավոտվա այդ վաղ պահերին մայթերը բավականին դատարկ են լինում, այնինչ փողոցի մեջտեղով, խուռն ու բազմերանգ, հոսում են բավականին ստվար բազմություններ (ԵՁ, 315):

Պատահում է, որ ցեղական լավագույն ցուլերի համար շատ ավելի բարձր գին են վճարում, այն ժամանակ, երբ միջակ կովն արժե 350—500 դոլլար (Մացկեխ, Ինչ տեսանք մենք ԱՄՆ-ում և Կանադայում, Երևան, 1957, 190):

Եթե ըմբռնամարտիկը դատավորի կանչից հետո չգա գորգի վրա, ապա նա ընդհանրապես զրկվում է մրցումներին մասնակցելուց, այն դեպքում, երբ առաջ նման պայմաններում ըմբռնամարտիկին պարտություն էր հաշվվում (ՀՖ, 1957, դեկտ. 27, 4):

Վերջին երկու օրինակներում օգտագործված շաղկապները անմիջականորեն կազմվել են ուսերենի համապատասխան շաղկապների ազդեցությամբ:

Ձուգադրական և հակադրական նույնպիսի հարաբերություններ է նշում սինչ շաղկապը, որը արդի հայերենում շատ ավելի տարածված է որպես ժամանակի շաղկապ. օրինակ՝

Եվ ես այսպես եմ խոսում հետո, որովհետև գիտեմ, որ դու կարող ես մտադրվել, բայց չես կամենում: Արյուն չես ուզում թափել առատորեն մինչ պետք էր թափել հեղեղներով (ԴԴ, 4, 512):

Պետք է նշել, որ այս շաղկապները հակադրության հետ միասին ժամանակի ինչ-որ անորոշ երանգ էլ են ակնարկում, որը գերիշխող է դառնում, երբ այդ շաղկապները ոչ թե երկրորդ, այլ առաջին նախադասության սկզբում են գործածվում:

Եվ մինչդեռ գնում էր նա, ճամփում էր նրան Աննան

Սենյակի պատուհանից արցունքոտ իր հայացքով... (ԳՍԲ, 357):

Թվարկված հակադրական շաղկապները ժողովրդական կենդանի լեզվում քիչ են հանդիպում և հիմնականում տարածված են գեղարվեստական և գիտա-
յազգայական գրականության լեզվում:

ԱՊԱ — Իմաստային կիրառության և հակադրության աստիճանով իսկ շաղկապին մոտ է նաև ապա շաղկապը, որը, ի դեպ, նույնպես ժամանակի մակրայ է եղել և է այժմ: Որպես կիրառական առանձնահատկություն պետք է նշել, որ այս շաղկապը գործածվում է միշտ հարցական նախադասություններից կամ բառերից առաջ: Այս շաղկապով արտահայտվող հակադրությունը, վերաբերելով ամբողջ նախադասությանը, միաժամանակ կենտրոնանում է նախադասության անդամներից որևէ մեկի վրա, ինչպես՝

Նա թատրոն է գնալու, ապա դո՞ւ ուր պետք է գնաս:

Դու դպրոց ես գնում, նա՞՝ գրադարան, ապա տա՞նը ով պետք է մնա:

Արտահայտչական-ոճական լայն գործածություն ունեցող այս շաղկապը տարածված է նաև ժողովրդական լեզվում՝ հապա և հատկապես բա՝ ձևերով, նույնիսկ իմաստային այլ կիրառություններով, ինչպես՝

Դու, որ ֆերմայի վարիչ ես, ասում եմ, ու այդպես թերահավատ ես դեպի պլանը, բա գումապահներն ու կթվորները ո՞նց են աշխատելու (ՆՁՀ, 8):

Ասելիքս էս չէր, հապա (= այլ) էն, որ նամեստնիկը իրան կուտեր, որովհետև ամոթ էր ողջ աշխարհի առաջ... (ԱԻ, 407):

Երբեմն այս շաղկապի կիրառության ժամանակ աղոտ կերպով զգացվում է նաև ինչ-որ հետևանքի երանգ՝ «ուրեմն» նշանակությամբ, որը անշուշտ բխում է նախորդ նախադասության բովանդակությունից: Դու պատահական չէ, քանի որ նա հայերենում հանդես է գալիս նաև որպես հետևանքի շաղկապ. օրինակ՝

— Ես չեմ ուզում գնալ մոտ, դա ինձ համար դժվար է:

— Ապա ի՞նչ պիտի անես. չէ՞ որ չի կարելի հրաժարվել:

Հակադրության ոչ մի նշանակություն չունի այս շաղկապը հետևյալ օրինակում.

Ու՞ր ես գնում. ապա մի եկ այստեղ: Դպրո՞ց, որտե՞ղ են ապա քո գրքերը:

ԹԵ ՉԷ, ԱՊԱ ԹԵ ՈՉ, ԵԹԵ ՈՉ, ԱՅԼԱՊԵՍ — Յուրահատուկ իմաստային և կառուցվածքային առանձնահատկություններ ունեն այս շաղկապներով կապակցվող նախադասությունները: Առաջին նախադասության մեջ խոսվում է մի իրողության, դեպքի մասին, որը եթե չիրականանա, ապա կունենա այն հետևանքը, որն արտահայտված է հաջորդ նախադասությամբ: Այս յուրահատուկ հակադրական հարաբերությունը առաջանում է վերոհիշյալ շաղկապների կիրառության շնորհիվ, որոնք ունեն գեղջված պայմանի երկրորդական նախադասության արժեք: Այսպիսով, այս շաղկապների հակադրական նշանակությունը հանդես է գալիս պայմանի և նեաեանքի ֆունկցիայի վրա, որով և նրանք զգալիորեն տարբերվում են հակադրական ճյուղ շաղկապներից: Օրինակներ՝

Քանի որ մտածել ես, շտապիր, քե չէ (= իսկ եթե չշտապես, ապա) ուրիշները կարող են քեզանից առաջ ընկնել (ՀՔ, 29):

— Ափսոս հայերենին չեմ տիրապետում. ապա քե ոչ (= իսկ եթե տիրապետեի, ապա) ցույց կտայի այդ «ծայրահեղ վարդապետներին», թե որտեղ են թաղված նրանց պապերը (ՀՀԵ, 406):

Դու պետք է ինձ սպասես կանգառի մոտ, երբ ոչ (= իսկ եթե չսպասես կանգառի մոտ, ապա) մենք իրար չենք հանդիպի:

— Չէ, հայրիկ. ֆոկլորը մի անգամ կանեն, այլապես (— իսկ եթե մի անգամ չանեն, ապա) համ չի ունենալ (Ն-Դ., 46):

ԵԹԵ... ԱՊԱ — Չնայած այն հանգամանքին, որ այս շաղկապը տարածված է հենց պայմանի ու նետանքի հարաբերություն նշելու կիրառությամբ, սակայն, երբեմն, նախադասության հատուկ կառուցվածքներում, բոլորովին կորցնում է իրեն հատուկ այդ նշանակությունը և արտահայտում է զանազան փաստերի, երևույթների և իրողությունների գույազրում, ըստ որում այդ գույազրումը հակադրական բնույթ ունի հենց այդ տարրեր, իրարից չբխող փաստերի առկայության պատճառով։ Այս տեսակետից այդ շաղկապը նշանակությամբ մոտ է այն ժամանակ, երբ, մինչդեռ շաղկապներին։

Զուգադրման նշանակությամբ հակադրելով ամբողջ համադաս նախադասությունների բովանդակությունները, այս շաղկապը կարող է հատուկ սաստկությամբ վերաբերել նախադասության որևէ մի անգամի, սովորաբար այն անգամին, որը անմիջապես երևի և ապա շաղկապական բաղադրիչներին է հաջորդում։ Օրինակներ՝

Սրև ձմռանը քաղաքի Աբովյան փողոցի վերին մասերում լինում է խիստ ցուրտ, ապա Բաղրամյան փողոցում օրվա նույն ժամին համեմատաբար տաք է լինում։

Սրև լանաստեղծը չէր հասկանում երաժշտին, երաժիշտն էլ բանաստեղծին, ապա դերասանները ոչ մեկին էին հասկանում, ոչ մյուսին (ՌՌԺՔ, 346):

ԱՅԼ — Համադաս նախադասությունների միջև եղած հակադրական հարաբերությունը խիստ կերպով է դրսևորվում, երբ սրպես կապակցության միջոց ալլ շաղկապն է օգտագործվում։ Այստեղ արդեն տարբեր իրողությունների գույազրման և հակադրման հարաբերությունը չէ իշխողը, ոչ էլ ժխտվող պայմանից բխող հակադրությունը։ Այստեղ արդեն նախորդ նախադասության բովանդակությունը ամբողջապես ժխտվում է նրանում օգտագործված ստորոգյալի ժխտական ձևի պատճառով, որով ընդունելի է դառնում ալլ շաղկապով սկսվող նախադասության բովանդակությունը։ Օգտագործվում է նաև նախադասության համազոր անդամների միջև։ Օրինակներ՝

Զի մոռանում ասել նաև այն, որ ինքը դիմակավորված չէ և ոչ էլ թույլանական տիպի մի աֆերիստ, ալլ իրեն գերում է մաքուր և անարատ սերը (ՍԴ, 1957, դեկտ. 26, 4):

— Թագուհին այլևս հետամուտ չէ փառքի, ալլ հոգվո հանգստության (Մուր., 227):

Նրանք չպիտի լինեն քո դատավորը, ոչ, ալլ դու ինքդ (Շիրվ., 198):

ՈՉ ԹԵ... ԱՅԼ — Առաջին համադասի չ-, չի մասնիկների փոխարեն շատ հաճախ օգտագործվում է ոչ թև (գրաբարում ոչ երբ) ժխտական կապակցությունը, որով ավելի ընդգծված և հատուկ ձևով է նշվում ստորոգյալի ժխտվելը, իսկ այդ իր հերթին ուժեղացնում է ալլ շաղկապի ժխտող, բացառող նշանակությունը։ Որպես կիրառական առանձնահատկություն պետք է նշել, որ շաղկապական այդ երկու բաղադրիչները սովորաբար տեղադրվում են նախադասության այն համազոր անդամներից առաջ, որոնք շեշտված ձևով ժխտվելու կարիք ունեն։ Օրինակներ՝

եվ ուրախալին այն է, որ ռեժիսորը պատմական նշանակալից իրադարձությունների և դրանց մասնակից հայրենասերների հերոսականությունն ու էպիկական վեհությունն արտահայտել է ոչ քան դրությունների ու փոխհարաբերությունների պլակատային ընդգծումների, այլ հոգեբանական վերլուծությունների միջոցով (ԳԹ, 1957, դեկտ. 26, 3):

Նա ոչ քան աշակերտ է, այլ ուսանող և սովորում է ոչ քան դպրոցում, այլ ինստիտուտում:

Ոչ քան... այլ շաղկապի փոխարեն շատ հաճախ օգտագործվում է ոչ...այլ կապակցություն (այս վերջին ձևը տարածված էր նաև դրաբարում), առանց իմաստային ոչ մի փոփոխության, ինչպես՝

Քյաղիմ-բեգը սթափվեց ոչ երկյուղից, այլ ամոթից... (Շիրվ., 99):

Այս զուգահեռի շաղկապները հիմնականում ծառայում են նախադասության անդամների կապակցմանը:

Ո՞վ Թե, ե՞վ Ո՞վ Թե — Գերազանցապես գեղարվեստական գրականության լեզվում տարածված այս հակադրական շաղկապներով կապակցվում են, ինչպես սրամիտ կերպով՝ նկատել է բազմաձևաստակ հայագետ Մ. Արեղյանը, նույն այդ ժխտական կապակցությունները, սակայն շուտ տված ձևով, որի ժամանակ երկրորդ նախադասությունը սկսվում է և ոչ քան և հազվադեպ ոչ քան շաղկապներով, ինչպես՝

Ես չեմ կարդում, այլ գրում եմ — Ես գրում եմ և ոչ քան կարդում:

Դու նրան ոչ քան տանը կգտնես, այլ ընթերցարանում==Դու նրան ընթերցարանում կգտնես և ոչ քան տանը:

Միհրնեհեհր մեր կրոնափոխն է ուզում, ոչ քան մեր պատիվը (ԴԴ, 3, 292):

Հանդիպում է նաև և ոչ, ինչպես՝

Բայց վեպի համար հարկավոր է ընթացիկ, շարժուն կյանքը յուր բոլոր Լրևույթներով, և ոչ թաղավորների կամ իշխանների աշխարհակալության կամ պարտության շոր ու ցամաք տարեգրությունը (Բաֆ., 8):

Պատահում է նաև ժողովրդական ոճով չէ քան ձևը, ինչպես՝

Նիզակի է գնում ձևուս, նիզակի, չէ քան գերանդու,—խոսեց մի շինական (ԴԴ, 350):

Այս շաղկապի ունեցած հակադրական նշանակությունը զորացվում է, երբ և-ի փոխարեն օգտագործվում է այլ շաղկապը, ինչպես՝

Դրա նպատակն է՝ խորացնել զինաթափման բնագավառում ստեղծված փակուղին. այլ ոչ քան դուրս բերել փակուղուց (Նր., 1958, մարտ 12, 3):

Հակադրական հարաբերություններ են նշում նաև բայց, բայց և այնպես, սակայն, սակայն և այնպես, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այնուհանդերձ, այնուհանդերձ, համենայն դեպս, ըստ որում, ընդ որում, միայն, միայն քան շաղկապներ: Սրանք տարբերվում են մյուս հակադրական շաղկապներից նրանով, որ սահմանափակում են նախորդ նախադասության բովանդակությունը՝ իրենցով կապակցվող հաջորդ նախադասության նշանակության պատճառով: Այդ հակադրության ու սահմանափակման երանգը հիշյալ շաղկապներից յուրաքանչյուրի մոտ գրանցվում է տարբեր ուժով ու սաստկությամբ:

ԲԱՅՑ — Ամենագործածական հակադրական շաղկապն է, որը լայն կիրառություն ունի դրական լեզվի բոլոր ոլորտներում: Խիստ կերպով արտա-

հայտնված հակադրություն է նշում, որի պատճառով առարկության գաղափարի հոմանիշ է դարձել: Սահմանափակելով նախորդ նախադասության բովանդակությունը որևէ կողմով կամ հարաբերությամբ, այս շաղկապը միաժամանակ ունի երկրորդական, լրացուցիչ իմաստային երանգներ: Օգտագործվում է ինչպես նախադասության անդամների, այնպես էլ համադաս նախադասությունների միջև: Շատ տարածված է նաև դիալոգներում, որտեղ հատուկ կենդանություն ու շեշտակիություն է տալիս խոսակիցների առարկություններին: Այժմ տեսնենք, թե իմաստային ինչ երանգներ ունի այս շաղկապը իր հիմնական նշանակությանը զուգընթաց:

1) Այս շաղկապով կապակցվում են երկու տարբեր փաստեր, որոնք զիջական երանգով են հակադրվում: Պարզ է, որ նախադասության անդամների կապակցման ժամանակ այդ երանգը չի դրսևորվում: Օրինակ՝

Սենյակը փոքր էր, համեստ, գրեթե աղքատ կահավորանքով, բայց լավ տպավորություն էր գործում (Ն.-Դ., 62):

2) Սահմանափակելով նախորդ մասի բովանդակությունը և այն որոշ վերապահությամբ ընդունելով, բայց շաղկապով կապակցվող մասը ձեռք է բերում լրացնող, ճշգրտող բնույթ, ինչպես՝

Այնտեղ էլ ուտում էին ախորժակով, բայց արժանավայել, խմում էին շատ, բայց ոչ շտապով և ոչ աղմկալի, ծիծաղում էին, բայց ցածր ձայնով (Շիրվ., 27):

3) Մասնակի հակադրման դեպքում բայց շաղկապը ավելի որոշակիորեն է դրսևորում ճշգրտող, բացահայտող իր երանգը, ինչպես՝

Այսօր անձրև է նորից, բայց աշնանային, հյուսիսային (ՎՏ, 365):

Ինչպես տեսնում ենք, անձրևելու փաստը չժխտվեց, բայց ճշտվեց նրա ինչպիսին լինելու հարցը:

4) Առանձնապես սուր հակադրություն չկա հետևյալ նախադասության մեջ՝

Իսկ ձեզ կտամ այդ գիրքը, բայց պետք է շուտ վերադարձնեք:

Այստեղ հակադրությունը կապված է որոշակի պայմանի հետ: Այսպես՝ առաջին նախադասության գործողությունը կիրականանա, եթե կատարվի կամ ընդունվի բայց շաղկապով հակադրվող նախադասության մեջ արտահայտված ցանկությունը կամ պայմանը: Հակադրությունը ենթադրական է, որ իսկույն կվերանա, եթե ընդունվի այդ պայմանը:

5) Բայց շաղկապը կապակցում է երբեմն այնպիսի նախադասություններ կամ ասույթներ, որոնք, բուն իմաստով, տրամաբանական կապ չունեն նախորդ մասի հետ, այլ սոսկ ավելացված են խոսակցության կամ մտածմունքի պահին ավելի կարևոր, անհրաժեշտ մի դիտողություն հիշելու պատճառով, որով և ընդհատվում է նախորդ միտքը: Նման դեպքերում հակադրությունը չափազանց թույլ է, ձևական, կարծես միայն նպատակ ունի նշելու, որ նյութը փոխվեց: Այդ կիրառությունները ավելի տարածված են դիալոգներում և մենախոսություններում, ինչպես՝

— Ես քեզ սպասում եմ մի ամբողջ ժամ, ինչո՞ւ ուշացար: Բայց ի՞նչ եղավ Սուրիկը, կարծես չի երևում:

Շատ հարուստ հակադրական երանգներով օժտված այդ շաղկապը լայնորեն տարածված է նաև ժողովրդական լեզվում, ուր, սակայն, նկատվում է հե-

տաքորթրական մի երևույթ: Այսպես, բայց շաղկապը երբեմն, փոխանակ կապակցվող մասից առաջ գրվելու, օգտագործվում է վերջում, ինչպես՝

— Տեսա՞ր Հրանտին, ասացի՞ր գալու մասին:

— Տեսա, ասացի, չի ուզում բայց:

Կարծես վերջում է հիշվում հակադրելու անհրաժեշտությունը և հենց վերջում էլ գրվում է այդ շաղկապը՝ հիշյալ հարաբերությունը ընդգծելու համար: ԲԱՅՑ ԵՎ ԱՅՆՊԵՍ, ՍԱԿԱՅՆ ԵՎ ԱՅՍՊԵՍ — նշանակությամբ ու գործածությամբ հարադրական այս շաղկապները հոմանիշ են բայց և սակայն բառերին: Միայն թե նրանց օգտագործման ժամանակ կարծես ավելի է շեշտվում զիջական և սահմանափակման մոմենտը: Սակայն և այնպես շաղկապը արդի հայերենում, գրաբարի համեմատությամբ, խիստ սահմանափակ գործածություն ունի: Օրինակներ՝

Չնայելով, որ նրա տարիքը երեսունից անց էր երևում, բայց և այնպես թվում էր, թե նրա մարմինը ընդունակ է շքեղորեն դարգանալու (Ն.-Դ., 10):

Թեև նրա հարաբերությունները բավական սառն էին դարձել մեծ-զբսի հետ, որը նրան բազմիցս նկատողություն էր արել, բայց նա այդ հաշվի չէր առել. — սակայն և այնպես նա շարունակում էր ժամանակ առ ժամանակ դարձյալ գնալ (ՌՌԺՔ, 350):

ՍԱԿԱՅՆ — Իմաստով շատ մոտ է բայց շաղկապին: Ունենալով այդ շաղկապի գրեթե բոլոր իմաստային կիրառությունները, հիմնականում նշում է սահմանափակման և զիջական երանգներով հակադրություն, սակայն ավելի մեղմ դրսևորումով: Մեծ մասամբ օգտագործվում է նախադասությունների կապակցման համար: Այժմ բերենք այդ շաղկապի ամենատարածված կիրառություններից օրինակներ՝

1) Հակադիր հետևանքի հարաբերություն՝

Ձին մինչև ծնկները թաղվեց կունրակի¹ մեջ, սակայն շղանդաղեցրեց իր ընթացքը (ՆՁԶ, 14):

2) Հակադիր հետևանքի կամ զիջական հարաբերությունը արդեն թույլ է դրսևորվում հետևյալ նախադասության մեջ.

Հանկարծ սկսեց ուշ դարձնել... երևույթը մի հասարակ և շատ հասարակ մարդ էր, կարծես ծանոթ դեմքով, սակայն որին ժակը չճանաչեց (ԴԴ, 21):

3) Նախորդ մասը որևէ կողմով սահմանափակելու և դրանով էլ ճշտելու և ընդունելի դարձնելու օրինակ է հետևյալ կիրառությունը.

Լիլիթ ծիծաղելով, սակայն ցուրտ ձայնով ասաց (ԱԻ, 326):

4) Որևէ դեպքի, իրողության կատարման համար խանգարիչ փաստ է նշվում.

Ինչ վաղը կանչել ևս, սակայն ևս այդ օրը զրադված եմ:

Այս շաղկապը բայց շաղկապից տարրերվում է շարադասական իր ճկունությամբ: Հիմնականում օգտագործվելով կապակցվող մասի սկզբում, այս շաղկապը կարող է, առանց իմաստային որևէ լուրջ փոփոխության, դրվել նաև նախադասության մյուս սանդղաններից առաջ (մեծ մասամբ ստորոգյալից) և նույնիսկ նախադասության վերջում:

ՄԻԱՅՆ, ՄԻԱՅՆ ԹԵ — Այս շաղկապների կիրառության ժամանակ հակադրությունը երբեմն դրսևորվում է պայմանի ֆոնի վրա: Առաջին նախադա-

¹ Պետք է լինի կունարկ:

սությամբ նշվում է մի փաստ, իսկ երկրորդ համադասով որևէ կողմով սահմանափակվում է նրա բովանդակությունը. ինչպես՝

Պատմում է իր քաջագործությունը ու հետոն էլ հայտնում է. որ պետք է իր կնկանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չմնա... (ՀԹ, 421):

Ես այդ մասին անպայման գրելու եմ, միայն քեռն ուզում եմ ավելի հանգամանորեն ծանոթանալ գործին:

Պայմանի երանգը չի զբաղվում հետևյալ օրինակներում՝

— Ա՛, նվարդ, դո՛ւ ես, շատ ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ. ե՛րբ ես իջել երկնքից... երեկ նկարդ տեսա թերթում, միայն հողվածն անշնորհք էին գրել, արժեր որ պոետները գովեին քեզ... (ՀՔ, 21):

Դա լիզան էր՝ ինչպես Շուլգան գիտեր նրան ավելի քան քսան տարի առաջ, միայն քեռ ավելի նրբացած, քան այն բանվորուհի լիզան մի քիչ մեծ ձեռներով և կտրուկ շարժումներով, որին Շուլգան գիտեր և սիրում էր (ՖԵԳ, 97):

Ժողովրդական խոսակցական լեզվում տարածված է այս շաղկապի մեկնակ ձևը՝ նույնպիսի նշանակությամբ, ինչպես՝ ես կգամ, մեկնակ գու էլ արի:

Գ) ԲԱԺԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Այս շաղկապները հիմնականում նշում են փոխադարձ բացառման հարաբերություն, կապակցության այս ձևով նշելով այնպիսի փաստերի, իրողությունների թվարկում, որոնք, ընդհանուր առմամբ, լուրջ տարբերություն չեն ներկայացնում՝ ընդհանուր ասույթի բովանդակության մեջ փոփոխություն առաջացնելու տեսակետից: Բաժանական այս հարաբերությունը կարող է ամենատարբեր երանգներով ու աստիճաններով դրսևորվել այս կամ այն կիրառության ժամանակ:

Անշուշտ փոխադարձ բացառման իմաստային հարաբերությունը նկատի ունենալով է, որ մեր քերականներից շատերը այս շաղկապները համարել են հակադրական՝ հաշվի չառնելով նրանց միջև եղած լուրջ տարբերությունները:

ԿԱՄ — Բաժանական հարաբերություններ արտահայտող ամենագործածական շաղկապն է. օգտագործվում է ինչպես նախադասության անդամների, այնպես էլ համադաս նախադասությունների կապակցման համար: Երկու դեպքում էլ նշում է այնպիսի փաստերի, իրողությունների, երևույթների կամ հատկանիշների թվարկում, որոնք փոխադարձաբար բացառում են միմյանց, այսինքն, երբ ընդունում ենք թվարկված փաստերից մեկը, ապա բնականաբար բացառվում է մյուսը: Որինականեր.

Գուցե դուք հիմա հենց այդ լուսամուտի ետևում եք, մահճակալի վրա թիկն տված, կամ սեղանի քով նստած... (ԴԳ, 1957, № 5, 22):

Չէ որ ամեն անգամ, երբ տրամադրությունը բարձր գայրոց է գալիս, պատմության ժամերը տեղի չեն ունենում, և աշակերտները ազատ թափառում են կայարանում, կամ ժամանակից շուտ վերադառնում տուն (ԱՎ., 1958, ապր. 17, 4):

Կամ շաղկապը հավասարապես հանդես է գալիս նաև մեկնական նշանակությամբ բացահայտելով նախորդ մասի բովանդակությունը. օրինակ՝

Կիրովականը, կամ նախասովետական շրջանի Ղարաքիլիսան, Հայաստանի առաջնակարգ քաղաքներից մեկն է:

Այս շաղկապի իմաստային առանձնահատկությունները ուսումնասիրելու տեսակետից շատ հետաքրքրական է համեմատել այն միավորիչ և շաղկապի հետ: Վերջինիք երկու նախադասություն՝

Կանչի՛ր Սուրիկին և Մարտիրոսին:

Կանչի՛ր Սուրիկին կամ Մարտիրոսին:

Առաջին օրինակում պահանջվում է այդ երկու անձանց ներկայությունը, իսկ երկրորդում՝ կամ շաղկապի միջոցով նշվում է նրանցից որևէ մեկի ներկայության րավարար լինելը՝ ընտրությունը թողնելով կանչողի կամքին:

Սակայն, դրան հակառակ, որոշ դեպքերում այս շաղկապի բաժանական նշանակությունը այնքան է ազդուանում, որ մոտենում է և շաղկապին:

«Կամ» շաղկապը կարող է օգտագործվել ավարտված նախադասությունների կամ պարբերությունների միջև:

Արդի հայերենում կամ շաղկապին զուգահեռ տարածված է նաև նույնպիսի հարաբերություն նշող կամ քն հարադրական շաղկապը:

Փոխադարձ բացառման հարաբերությունը, մի փաստի, իրողության ընդունմամբ մյուսի մերժումը, ժխտումը սաստկանում է, երբ հանդիպում ենք նույն շաղկապի կրկնադիր գործածությանը: Օրինակներ.

Քրիստոֆը չգիտեր, թե ինչ բան է ֆիլիտը: Նա կամ սիրում էր, կամ չէր սիրում (ՌՌԺՔ, 333):

Երկընտրանքը տարօրինակ թվաց Ավուս: Կամ քսան ուրլի տուգանք անտառից փայտ գողանալու համար, կամ էլ Մյնածորի մի արջ սպանել (ԱԲԾ, 5):

ԹԾ — Արդի հայերենի ամենագործածական բաժանական շաղկապներից մեկն է: Օգտագործվում է թե նախադասության համազոր անդամների և թե համադաս նախադասությունների միջև: Փոխադարձ բացառման հարաբերությունը նշում է հարցի և ենթադրության ձևով, որի պատճառով երբեք չի կարող փոխարինվել կամ-ով. օրինակ՝

Չեմ հիշում, կարդացե՞լ եմ, քե ինձ ասել են, որ խոր հավատ են ունենում միայն շատ կարդացած և մեկ էլ շատ տգետ մարդիկ (Ն.-Դ., 51):

Թե շաղկապով կապակցվող համազոր անդամները կարող են շեշտված ձևով հարցական ինտոնացիա ունենալ, ըստ որում հարցական նշանը կարող է դրվել ինչպես շաղկապից առաջ ընկած մասի, այնպես էլ շաղկապի, կամ նրան հաջորդող մասի վրա: Նման դեպքերում ավելի է շեշտվում թվարկվող անդամների փոխադարձ բացառման հարաբերությունը: Համեմատիր երկու օրինակ՝

— Կանչի՛ր Սուրիկին կամ Մարտիրոսին:

— Կանչեմ Սուրիկին, քն՝ Մարտիրոսին: Առաջին օրինակում կամ շաղկապով ոչ մի ականարկություն չի արվում այդ անձնավորություններից մեկին ու մեկին գերադասելու կամ նախընտրելու համար, մինչդեռ երկրորդ օրինակում հստակ կերպով շեշտվում է, որ այդ երկուսից մեկն է միայն կարևորություն ստանում և հարցն էլ այդ անձը որոշելու համար է տրվում:

Խոսքին ոճական-արտահայտչական յուրահատուկ գունավորում է տալիս քն շաղկապի կրկնական գործածությունը կապակցվող տարբեր բառախմբերի միջև, ինչպես

ինչ զգացմունք էլ լինի՝ կարոտ քե, ափսոսանք, երազանք քե հանդիպում, մենակություն քե կարոտ, սիրո երջանկություն քե կսկիծ—ամեն տեղ բանաստեղծը պահպանում է հոգու կորովը և ապագայի հույսը (ԳԹ, 1957, դեկտ. 26, 2):

Բաժանական հարաբերություններ են նշում նաև մեկ... մեկ, մերք... մերք շաղկապները: Այս շաղկապների կիրառության ժամանակ փոխադարձ բացաման հարաբերությունը աղոտանում է նրանց արտահայտած ժամանակային հարաբերությունների ֆոնի մեջ: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

Ըստ երևույթին Տիգրանը աշխատում է կամ որպես խառատ, կամ որպես փափուկագործ:

Ըստ երևույթին Տիգրանը աշխատում է մերք որպես խառատ, մերք որպես փականագործ:

Արդի հայերենում բաժանական շաղկապի որոշ նշանակություն է ձեռք բերել րեկուզ եղանակավորող բառը կրկնադիր գործածությամբ, ինչպես՝

Անմիտ, հանգիստ և ամեն բան մոռացնող մի համերգ, որ միշտ կա բնության մեջ, րեկուզ ուրախ լինես. րեկուզ՝ տխուր (ԴԴ, 14):

Մենք սահմանափակվեցինք շարադրելով արդի հայերենի միավորիչ, հակադրական և բաժանական համադասական շաղկապների ամենատարածված կիրառությունները միայն, մինչդեռ, ինչպես ուսումնասիրությունները ցույց են տալիս, այդ շաղկապները շատ հարուստ են նաև մասնակի այլ գործածություններով ու իմաստային երանգներով, ինչպես նաև ոճական ու արտահայտչական բազմաթիվ դրսևորումներով: Սակայն այսօրան էլ բավական է ցույց տալու համար, որ արդի հայերենը ունի համադասական շաղկապների շատ հարուստ համակարգ, որի մեծ մասը ժառանգված է դեռ գրաբարից, իսկ մյուս մասը ժողովրդական լեզվի, թարգմանական գրականության և ընդհանրապես լեզվի զարգացման ու կատարելագործման արդյունք է:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱԲԵ — Ակսել Բակունց, Երկեր, Երև., 1955:
 ԱԻ — Ավետիք Իսահակյան, Ընտիր երկեր, Երև., 1948:
 ԳՄ — Գուրգեն Մահարի, Երկեր, Երև., 1954:
 ԳՈԲ — Գեղամ Սարյան, Բանաստեղծություններ, Երև., 1954:
 ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան, Ընտիր պատմվածքներ, Երև., 1950:
 ԴԴ.3 — » » », Երկերի ժողովածու, հատ. III, Երև., 1956:
 ԴԴ.4 — » » », » », հատ. IV, Երև., 1957:
 ԴԴՎ — » » », Վարդանանք, Երև., 1954:
 ԵԶ — Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երև., 1953:
 ԼԵ.V — Լեւին, Երկեր, հատ. V, Երև., 1948:
 ԶԹ — Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Երև., 1953:
 ՀՀԵ — Հ. Հակոբյան, Երկեր, Երև., 1951:
 ՀՄՔՏ — Հ. Մանանդյան, Քնն. աես. հայ ժող. պատմ., հատ. Բ, մասն Ա, Երև., 1957:
 ՀՍ — Համո Սահյան, Բարձունքի վրա, Երև., 1955:
 ՀՔ — Հրաչյա Քոչար, Բարեկամություն, Երև., 1950:
 ՄԳՄ — Մուրացան, Գեորգ Մարգարետունի, Երև., 1939:
 ՄՈՒՐ. — Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. III, Գեորգ Մարգարետունի, Երև., 1952:
 Ն.-Դ. — Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VI, Մահը, Երև., 1946:
 ՆԶՀ — Նաիրի Զարյան, Հացավան, Երև., 1955:

- Շիրվ. — Շիրվանշահե, երկերի լիակատար ժողովածու, հատ. IV, Քառս, Երև., 1950:
 ՈՄԲ — Ս. Ոսկերչյան, Մեր Բայրուրաբը, Երև., 1956:
 ՋԼՄԻ — Ջեկ Լոնգոն, Մարտին Իդեն, Երև., 1951:
 ԻԻԺԲ — Իոսեն Իոյան, Ժան Քրիստոֆ, III, Պատանեկույուն, Երև., 1939:
 ՎՏ — Վահան Տերյան, երկերի ժողովածու, Հայպետհրատ, 1950:
 ՍԶ — Ստեփան Չոբյան, երկերի ժողովածու, հատ. IV, Երև., 1948:
 Բաֆ. — Բաֆֆի, երկերի ժողովածու, հատ. III, Սամվել, Երև., 1950:
 ՖեԳ — Ա. Ֆադեև, Երիտասարդ Գվարդիա, Երև., 1947:

Լրագրեր և ամսագրեր

Ավ. — Ավանդարդ, ԵԹ — Գրական թերթ, Եր. — Երևան, ՀՖ — Հայաստանի ֆիզիկոսությունիկ, ՍԳ — Սովետական գրականություն, ՍԴ — Սովետական զարգացում, ՍՀ — Սովետական Հայաստան (սրաթերթ):

ЗНАЧЕНИЕ И УПОТРЕБЛЕНИЕ СОЧИНИТЕЛЬНЫХ СОЮЗОВ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Г. Л. ГАРЕГИНЯН

(Р е з ю м е)

Союзы современного армянского языка, большая часть которых унаследована из древнеармянского языка, прошли длительный путь развития и теперь выступают в языке в качестве средств связи, богатых смысловыми и стилистическими оттенками. Они не только сохранили наиболее важные значения союзов древнеармянского языка, но и обогатились многочисленными и разнообразными семантико-синтаксическими оттенками.

Развитие сочинительных союзов как в качественном, так и в количественном отношении происходило и происходит в соответствии с внутренними законами развития языка и под влиянием диалектов, устной народной разговорной речи и переводной литературы.

В статье описываются наиболее распространенные употребления сочинительных союзов современного армянского языка, которые, соединяя однородные члены предложения и однородные предложения, а также различные отрезки речи, и указывая на различные смысловые отношения и оттенки между ними, делятся на следующие виды:

1. Союзы, выражающие соединительные отношения;
2. Союзы, выражающие противительные отношения;
3. Союзы, выражающие разделительные отношения.

Особое внимание уделяется стилистическим различиям союзов и их употреблению как в общем плане, так и в различных литературных жанрах.